

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Ի. Ս. Վ. Արդութեան-Երկայնաբազուկ. ՄԱՏԵՆԱԿԱՆ ՊԱՐՏՆԶ. Ճեռնարկ
մայրերի և դաստիարակչուհիների համար. նստաներով և նկարներով.
Թիֆլիզ 1905 էջ 223 66. դ. 3 բ.

Ընդհանուր կրթութիւն տուող դաստիարակչական դպրոց-
ների շարքում մանկական պարտէզը կամ ծաղկոցն ունի իւր
պատշաճ տեղը: Ծաղկոցում փոքրահասակ մանուկները թէ ֆիզի-
կապէս և թէ մտաւորապէս պէտքէ նախապատրաստուեն
ընդ դպրոցական շրջանի համար. մանկան քնքոյշ զգայարան-
ները պէտքէ վերին աստիճանի խնամքով ու հոգացողութեամբ
զարգացնել, որպէս զի ընդունակ լինին ապագայում իրենց
կատարելիք մեծ դերը խաղալ մտաւոր ու հոգեկան զարգացման
ասպարիզում: Առանց զգայարանների մենք չենք կարող ոչ մի
մտապատկեր կազմել, իսկ մտապատկերները հոգեկան կեանքի
անհրաժեշտ հիմքն են կազմում. ծաղկոցը պէտք է ուրեմն
4—6 տարեկան երեխաների զգայարանները խնամքով կրթէ և
նրանց պարզ ու դիւրըմբռնելի մտապատկերներ հայթայթէ:

Ծաղկոցի նախապատրաստութիւնը աւելի կանոնաւոր
հիմքերի վրայ է դնում դպրոցական ուսուցումը և նպատակա-
յարմար ուղղութիւն տալիս նրան:

Ծաղկոցի գաղափարը վաղուց արդէն արծարծուած և գոր-
ծադրուած լինելով Ներոպայում, հարկաւ մեզ համար էլ նորու-
թիւն չէ. ութսունական թուականներին արդէն, շնորհիւ յար-
գելի Տ. Բաբայեանի, Թիֆլիզի հայ մանուկներից շատերը
վայելում էին ծաղկոցի բարիքները և նոյն իսկ մի քանի
գաւառաբնական հայ հասարակութիւններ ունէին այդ օգտա-
կար հիմնարկութիւնը: Հայ ծաղկոցների գոյութիւնն եր-
կարատեւ չեղաւ մեզանում, որովհետեւ կառավարութիւնը զլացաւ
այդ գեղեցիկ հաստատութեան բարիքները հայ մանուկներին՝
իրաւունք չտալով մեզ ծաղկոցներ ունենալու:

Այժմ երբ նոյն կառավարութիւնը տեսնելով իւր աններելի

սխալը, նորից արտօնեց մեզ՝ մեր սեպհական դպրոցական հաստատութիւններն ունենալու, աւելի քան ցանկալի է, որ հետզհետէ ծաղկոցների մի խիտ ցանցով ծածկուին հայաբնակ քաղաքները: Այս տեսակէտից անս սրտանց կարելի է ողջունել Ս. Վ. ի հրատարակութիւնը, որ իւր բաղձակողմանիութեամբ ու նիւթերի առատութեամբ մեծ օժանդակութիւն կարող է տալ հայ ծաղկոցների ղեկավարներին:

Ս. Վ.-ի «մանկական պարտէզը» մեծադիր մի ստուար հատոր է բաղկացած բնագրից, նկարներից և ձայնագրուած հրգներից. հետեւելով հեղինակի նիւթերի դասաւորութեան կարգին՝ մի քանի դիտողութիւններ անենք:

Ա. յառաջաբանում հեղինակը շեշտելով ընտանեկան կրթութեան առաւելութիւնը, միևնոյն ժամանակ պատկերացնում է այն ձախող հանգամանքները, որոնց շնորհիւ անկարող է լինում զբաղուել փոքրիկ մանուկների կանոնաւոր կրթութեամբ, ուստի և անհրաժեշտ կարիք է զգացում մանուկների կրթութեան գործն ուրիշներին յանձնել: Բացատրուած է նոյնպէս թէ ինչից զրդուած ինքը ձեռնարկել է «մանկական պարտիզը» հրատարակութիւնը: Թէ այս յառաջաբանում և թէ առհասարակ ամբողջ գրքի մէջ հեղ. ոչ մի խօսքով չէ յիշատակում այն մասին, որ իրենից առաջ ուրիշներն էլ մեզանում զբաղուել և գործել են այդ ասպարիզում. ոչ մի խօսք Տ. Տ. Բաբայեանի և Մատակեանի գործունէութեան մասին, նոյն իսկ մանկական պարտիզի հայ գրականութեան մասին ակնարկ անգամ չկայ: Արդեօք Ս. Վ.-ին ծանօթ չեն դրանք, թէ նա չէ կամեցել խօսել այդ մասին, չենք կարող ասել, սակայն այսպիսի ստուար աշխատութեան մէջ անհրաժեշտ էր գոնէ մի քանի խօսքով յիշատակել ծաղկոցի ունեցած անցեալ պատմութիւնն ու սակաւաթիւ գրականութիւնը:

Իւրաքանչիւր ընթերցողի ուշադրութիւնը կգրաւի «յառաջաբանի» վերջին տողերը. «7-8-10 տարեկան մանուկը համարեա արդէն կազմակերպուած ընաւորութիւն է (?)». նրան փոխել անկարելի է, (?) կարելի է միայն կոտրել (?): Բայց կոտրել ընաւորութիւնը — դա մի այնպիսի յանցանք է (?) սեփական խղճի դէմ, որ ազնիւ և բարեկիրթ մարդը դրան չի համաձայնի, և վերջապէս դա մանուկին երբեք (?) չի տանի դէպի բարին» (էջ VI.):

Այս տողերը շատ տարօրինակ միտք են արտայայտում և հիմնովին հակառակ են հոգեբանութեան նոյն իսկ տարրական սկզբունքներին. 7-10 տարեկան երեխան եթէ արդէն (նոյն իսկ

«համարեան») կազմակերպուած բնաւորութիւն» լինէր, էլ ինչ նպատակի պէտքէ ձգտէր դաստիարակութիւնը. ինչո՞ւ համար է դպրոցական կրթութիւնը. միթէ միայն նրա համար, որ երեխաներին զանազան գիտութիւններէ բեկորներ հաղորդենք: Ո՛չ, հիմնովին սխալ պաշտօն է այդ. երեխան կազմակերպուած բնաւորութիւն» չունի և այդ իսկ պատճառով դաստիարակում ենք նրան և միջոցներ գործ դնում, որ նրա բնաւորութիւնը հետզհետէ կազմակերպուի. «կազմակերպուած բնաւորութիւն» ո՛չ թէ երեխան, այլ պատանին, շատ անգամ նոյն իսկ երիտասարդը չէ ունենում, որովհետեւ բնաւորութեան հիմքն է հաստատուն կամքը և սրա հետ միացած գործը. բնաւորութիւնը ենթադրում է որոշ, հաստատուն սկզբունքներ, որ ոչ երեխան և ոչ պատանին դեռ ևս չեն կարող ունենալ: Երեխաներն ունենում են լաւ կամ վատ հակումներ, որոնց քաջալերելը կամ արմատախիլ անելը ոչ թէ յանցանք է, այլ դաստիարակների և առհասարակ չափահասների պարտականութիւնն է: Բնաւորութիւնը մարդուս հոգեկան կարողութիւնների վերջնական ամփոփումն ու գտումը լինելով չի կարող կազմակերպուած լինել մանկական հասակում:

«Յառաջաբանին» հետևում է ծաղկոցների հիմնադիր Ֆրեոբէլի համառօտ կենսագրութիւնը և ապա նրա «սխտեմի քննական գնահատութիւնը»:

Ֆրեոբէլին դեկամբրող սկզբունքներից շատերը հարկաւ չէին կարող դարաւոր գոյութիւն ունենալ. գիտութիւնները հետզհետէ մշակում ու կատարելագործւում են. մեծ փոփոխութիւնների է ենթարկուել նրա ժամանակի հայեացքը մանաւանդ հոգեբանութեան մասին. մշակուել ու համակարգուել է փորձնական (էքսպերիմենտալ) հոգեբանութիւնը, որ բոլորովին տարբեր ճանապարհով է զարգացել, քան Ֆրեոբէլի ժամանակի բնականացական (մետափիզիկական) հոգեբանութիւնը: Այս տեսակէտից անհա խիստ քննադատութեան են ենթարկուել նաև Ֆրեոբէլի ծաղկոցի հիմնական սկզբունքները—հակադրութիւնների օրէնքը—և աշխատել են հոգեբանական նորագոյն հետազօտութիւններից օգտուելով թարմութիւն մտցնել նաև ծաղկոցի հիմնական սկզբունքների մէջ: Ս. Վ. կողմնակից լինելով Ֆրեոբէլի սխտեմի մէջ փոփոխութիւններ մտցնելուն՝ չափազանցութիւնների մէջ է ընկել, նրա ասելով Ֆրեոբէլի սխտեմին հետևողները. «անդիտակցաբար (?) սպանում են մանուկի մէջ նրա ինքնասիրութիւնը (?)», ճնշում են նրա լաւագոյն

թուիքները և զարգացնում մանուկների մէջ ապաթիա (?) և անտարբերութիւն դէպի ամբողջ շրջապատը» էջ 8: Այս ծանր մեղադրանքն ապացուցանելու համար հեղինակն օրինակ է բերում միմիայն հետեւեալը. «մէկ, երկու, երեք, մանուկներ, վեր կացէ՛ք: Մէկ, երկու, երեք, մանուկներ, վերցրէ՛ք տետրակները: Մէկ, երկու, երեք, մանուկներ, վերցրէ՛ք մատիտները: Մէկ, երկու, երեք, մանուկներ, սկսեցէ՛ք նկարել» — էջ 8—9 —: Եւ ուրիշ ոչինչ. շատ թոյլ և չնչին ապացոյց վերոյիշեալ չափազանցութիւնների նկատմամբ: Ս. Վ. շարունակում է. «Եւ ինձ թոյլ կտամ քննել ֆր. բոլոր ընծաները, ապացուցանելու համար, որ Ֆրեօբէլը մանուկներին դարձնում է մեքենայ (?)», զոր կում է նրանց մտքի ու դործի ինքնուրոյնութիւնից (?) և որ նրա սխտեմը, իբրեւ անպայման վնասակար մանկավարժական տեսակէտից, կեանքի մէջ բոլորովին անգործադրելի է» (?) — էջ 9 —: Դարձեալ չափազանցութիւններ, որ բոլորովին հակասում են նոյն իսկ Ս. Վ. հետեւեալ եզրակացութեանը. «Ֆրէօբէլի առաջարկած բոլոր նիւթը — խաղիւրն ու պթալժոնները — անփոխարինելի են մանկական պարտէզներում որովհետեւ նրանք առնուած են կեանքից, բայց մի պայմանով որ նրանք մի յայտնի չափով մշակուեն...» — էջ 11 —:

Յաջորդ հատուածներից «Ինչ է մանկական պարտէզը» և «մօր կամ պարտիզպանուհու դերը մանկական պարտէզում» պարզ և նպատակայարմար բացատրութիւններ են, իսկ «Ինչպէս են մանուկներն անցկացնում ժամանակը մանկական պարտէզում» հատուածում հեղինակը ցուցմունքներ է տալիս ծաղկոցի կազմակերպութեան, տեղի, պարապման եղանակի, խաղերի ու խաղի նիւթերի մասին. շօշափում է նաեւ այն խնդիրը թէ Լ'նչ լեզուով պէտք է տեղի ունենայ պարապմունքը ծաղկոցում. ընդունելով, որ «մանուկի առաջին զարգացումն անպայման պիտի կատարուի մայրենի լեզուով» — էջ 30 —, հեղինակն այնուամենայնիւ այդ սկզբունքը հիմնովին ոչնչացնող դատողութիւններ է տալիս. «Թէեւ Ֆրեօբէլը և նրա հետեւողները այն սկզբունքին են, որ մանուկների առաջին զարգացումը պիտի կատարուի մայրենի լեզուով, քանի որ դա կանոնաւոր զարգացման միակ միջոցն է, բայց, դժբաղդաբար, այստեղ, Կովկասում, ուր խառն են ամեն տեսակ ազգութիւններ, այս սկզբունքն իրագործել անկարելի է (?)» — էջ 30 — «Դպրոցում, հանգամանքների շնորհիւ, չի լինում առանձին ուշադրութիւն դարձնել մայրենի լեզուի վրայ (ինչո՞ւ). ուրեմն մայրենի լեզուն ուսումնասիրելու միակ (?) աղբիւրը կարող է

լինել ընտանիքը և միմիայն ընտանիքը (?)» — էջ 30 —: «Հեշտ բան չէ պարտիզպանուհու համար, երբ նա ստիպուած է լինում մանկական պարտէզում ընդորխառնիճաղանճ լեզուները միացնել (?) և դարձնել մի տիրապետող լեզու (?)» — էջ 30 —:

Անհասկանալի է՝ թէ ինչո՞ւ Կովկասում «իրագործել անկարելի է» ծաղկոցի պարապմունքը մայրենի լեզուով աւանդելու սկզբունքը. և ի՞նչ է նշանակում «խառնիճաղանճ լեզուները միացնել և դարձնել մի տիրապետող լեզու»: Կովկասի բազմալեզու բնակչութիւնն ինչո՞ւ պէտք է արգելք լինի այդ սկզբունքին, քանի որ ամեն ազգ կարող է իւր ծաղկոցներն ունենալ և եղած փորձերն արդէն ցոյց են տուել, որ հայ հասարակութեան հայալեզու ծաղկոցները փառաւոր արդիւնք են տուել: Եթէ այս գիրքը տպագրուած լինէր երեք չորս տարի առաջ, կարող էինք ենթադրել, որ հեղինակի խօսքը վերաբերւում է ուրա Կառավարութեան բռնած սխալ ընթացքին, որ թոյլ չէր տալիս մեզ հայ լեզուով ծաղկոցներ ունենալ. թէև այդ էլ կարելի էր պարզ արտայայտել. բայց գիրքը տպագրուած է 1905 թ. երբ այդ արգելքն արդէն վերացել էր: Իսկ թէ հեղինակը վաղուց դրած լինելով նոր է տպագրութեան յանձնել, այդ դէպքում էլ պէտք է տպագրելիս անհրաժեշտաբար այդ հատուածը փոխէր: Ծաղկոց կամ մանկական պարտէզ դադարաւորն ինձ համար բոլորովին անհասկանալի է առանց մայրենի լեզուի: Առանց մայրենի լեզուի ծաղկոցը՝ կլինի մի անբնական, շինծու բան և նոյն իսկ վնասակար մանկավարժական ու հոգեբանական տեսակէտից: Ծաղկոցի գլխաւոր հիմքը մանկան մայրենի լեզուն է: Յաջորդ հատուածներում հեղինակը խօսում է ծաղկոցի գործնական պարապմունքների մասին՝ թուելով ու բացատրելով միմեանց ետևից հետեւեալները. «կաւից կաղապարելը», «ճիպոտներ դասաւորելը», «շինութիւն», «նկարչութիւն», «տրափօրստ և արտանկարչութիւն», «հիւսելը», «թուղթ կտրելը և կտրելը», յուլումը շարելը», «գործելը և ծակծկելը», «աշխատանքներ սխեմից, խցանից և տաշեղներից», «գունաւոր քառանկիւնիներ և եռանկիւնիներ դասաւորելը» — մօզայիկ», «թուղթ ծալելը», «պտուղներ շինելը օսլայից և մաննայի ալիւրից», «Լօտոս» — էջ 41—96 —:

Ծաղկոցի սովորական գործնական պարապմունքներն են սրանք և բաւականաչափ բացատրուած. իւրաքանչիւր հատուածին կցուած են համապատասխան նկարներ Օրինակները, որ տպագրուած են մաքուր, պարզ ու որոշ: Նկարների վերաբերութեամբ միայն մի նկատողութիւն պէտք է անենք, որ սրանց

մէջ իսկապէս մեր, տեղական կեանքից վերցրած իրերի ձևեր կամ բոլորովին չկան, կամ թէ շատ քիչ են. պատճառը հարկաւ յարգելի է. եթէ նոր կլիշէներ պատրաստուէին, գրքի ծախքը կարող էր կրկնապատկուել, այն ինչ պատրաստի նկարների կլիշէներ ձեռք բերելը համեմատաբար պակաս ծախք է պահանջում:

Գործնական պարապմունքների ժամանակ մանուկներին որոշ ձևեր կազմելու եղանակները սովորեցնելիս, սովորաբար այդ ձևերը նմանեցնում են իրական առարկաներին. որքան հնարաւոր է, պէտք է աշխատել, որ այդ նմանութիւնը մօտաւոր և բնական լինի, որպէս զի գաղափարների շփոթութիւն չառաջանայ. որպէս զի միտքս պարզ հասկացուի, մի օրինակ բերեմ. Ս. Վ. ցանկանում է խորանարդներով մի ձև կազմել տալ փոքրիկներին և որպէս զի այդ ձևի համար հետաքրքրութիւն առաջացնի նրանց մէջ, այդ ձևն ուզում է նմանեցնել աղուէսի որջին և հետոն էլ մի պատմութիւն է հաղորդում աղուէսի մասին: Ս. Վ. հարց է տալիս երեխաներին. «Քրտեղ է ապրում աղուէսը»—էջ 54—. նրանք պատասխանում են. «Աղուէսը բոյն է փորում իր համար հողի մէջ ծառի տակ». բնական հետեանքը պիտի լինէր, «երեխայք աղուէսի բոյն փորենք աւաղի կամ հողի մէջ», սակայն Ս. Վ. եզրակացնում է. «Մանուկներ, աղիւսներից բոյն շինենք աղուէսի համար», աղուէսն ապրում է անտառում: Խորանարդի մնացած երկրորդ կիսից անտառ շինենք մեր բոյնի շուրջը. «ահա մենք աղուէսի համար բոյն շինեցինք անտառում»—էջ 55—: Խնքն ըստ ինքեան այս հարկաւ չնչին բան է, բայց և այնպէս փոքրիկ երեխայի կազմած մտապատկերն աղուէսի որջի մասին սխալ և խառնաշփոթ կլինի. որչափ հնարաւոր է՝ պէտք է խոյս տալ այդպիսի խառնաշփոթութիւնից:

Գործնական պարապմունքներից յետոյ գրքի մէջ առաջ են բերուած տասնևութը մանկական զրոյցներ, որոնց մէջ կան յաջող և նոյնպէս անյաջող ընտրութիւններ. վերջիններիս կարգին կարելի է դասել «թղթենին աշտաբակի վրայ», «խելօք ձի» և այլն—մեր ձեռքն եղած օրինակի մէջ պակաս է եօթը պատմութիւն և դրանց տեղ կրկնուած է վերջին ութը պատմութիւնը՝ անշուշտ կազմարարի անհոգութեան պատճառով—: Այնուհետև Ս. Վ. խօսում է խաղերի մասին և առաջ բերում մանկական փոքրիկ ոտանաւորներ՝ բաւականաչափ թուով, երգելու համար. սրանցից մեծ մասն արդէն ծանօթ բաներ են: Մանկական ոտանաւորները պէտք է թէ առտաքին ձևի և թէ

բովանդակութեան կողմից մատչելի լինեն փոքրիկ մանուկներին և պարզ լեզուով գրուած. այս տեսակէտից անյաջող պէտք է համարել՝ Ա. «Ողջոյն առաւօտեանը»:

«Թարմ և զուարթ արթնանալով,
Ես պարտիզիկ վաղեցի,
Գիշերը անուշ քնելով,
Ես յետ մնալ չուզեցի.
Ահա շրջան եմ մտնում,
Եւ յաջ ու ձախ ձեռ մեկնում...» — էջ 150 —

Բ. «Հրաւեր»ը

«Արիք, ընկերք, շահտ արէք
Շուտով վարժատուն երթանք,
Դասերներս (?) պատրաստենք..» — էջ 152 —

Գ. «Զատիկ»ը

«Հողմը հնչեց ի հարաւէն,
Ազատուեցան դաշտը ձիւներէն.
Բերկըութիւն է ամեն տղոց...
Փթթեցան զերդ մայիսի վարդ...» — էջ 155 —

Դ. «Ահա եկաւ մեր գարունը».

«Վարդի թփեր կարգ ի կարգ
Բնութիւնից բուսել են,
Իսկ նոցա մէջ բարդ ի բարդ
Մանուշակներ բուրում են» — էջ 160 —

Ե. «Մայրենի լեզու»

«.. Այդ նախ զքեզ թոթովելս
Դեռ իմ մտքէն չէ ելեր...
Կեաց միշտ լեզուդ հայկարժան..» — էջ 164 —

Այսպիսի գրաբարխառն և դժուար հասկանալի բառերով չպէտք է ծանրաբեռնել 5-6 տարեկան մանուկներին. նրանց պէտք է տալ թեթեւ, կոկիկ, սահուն լեզուով ու դիւրժմունքով փոքրիկ ոտանաւորներ, որպէս զի հասկանալով ու սիրով երգեն:

Գրքի լեզուն ընդհանրապէս կանոնաւոր է — հեղինակը յառաջաբանի ծանօթութեան մէջ յայտնում է. «հայերէնի համար ես շնորհապարտ եմ պ. Լ. Մանուէլեանին».— բայց դարձեալ պատահում են անճիշտ դարձուածքներ. բաւականանա՞նք մի քանի օրինակներով. «դա ունեցաւ այն նշանակութիւնը, որ նրան մարդկանցից անշատեց և նա դարձեալ ինքն իր մէջ

պիտի կենդրոնանար: Այն դպրոցը, ուր Ֆրէօբէլն էր, չունէր ընդարձակ դասընթաց. դասընթացը բաւականին սահմանափակ էր».—էջ 2—: «... իրենց խստիւ կաշկանդում են նրա սխտեմի մեռեալ տառից».—7.—: «Գնդից և խորանարդից յետոյ Ֆր. տալիս է գլանակ, դարձեալ ծայրերի և միջինի դարգացման՝ իր նոյն օրէնքի հիման վրայ».—էջ 10—: «Դազանները? երևում են նրանց պարտէզում սովորաբար ամառը: Երևում են ճաւաղներ, կրիաներ, բազէ, բուն, ցինը...» —էջ 27—: Սովորական բլուր, բլրակ բառի տեղ գործ էածուած «լեռնակ» բառը. մի քանի տեղ կրկնուած է «կանգնած ճանապարհ», «դառնած ճանապարհ» և այլն:

Մատնացոյց անելով Ս. Վ. հրատարակած աշխատութեան մի քանի թերութիւնները, այնուամենայնիւ ողջունում ենք այս մեծահատոր գրքի լոյս տեսնելը. «Մանկական պարտէզ»-ը մեր մանկավարժական աղքատ գրականութեան մէջ պատուաւոր տեղ կըննի և գործնական կեանքումն էլ մեծ ծառայութիւն կանի այդ գործով զբաղուող մայրերին և վարժուհիներին: Յարգելի հեղինակն աշխատել է ըստ կարելոյն բազմակողմանի նիւթերով ճոխացնել իւր հրատարակութիւնը և օգտակար դարձնել: Գրքի դէնը—երեք բուրլի—գուցէ թանկ չէ ի նկատի ունենալով եղած ծախքը և աշխատութիւնը, բայց մեր հանգաւանքներն աչքի առաջ ունենալով՝ աւելի նպատակայարմար կլինէր, թէ կիսով չափ պակաս լինէր նշանակուած:

Շատ ցանկալի կլինէր, եթէ մեր հայաշատ քաղաքներում շուտով բացուէին կանոնաւոր ծաղկոցներ, ուր մանուկներն իրենց մայրենի լեզուով նախապատրաստուէին դպրոցական շրջանի համար:

2. Նախագիծ կանոնադրութեան ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑԱՎԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ. Թիֆլիս 1906 թ. էջ 16.:

Կովկասի հայութեան ամենաշերտ ցանկութիւններից մէկը կատարուեց. հայ եկեղեցական—ծխական դպրոցների ուժով փակուած դռները կրկին բացուեցան: Նորից վերսկսուեց քաղաքակրթական անդուլ գործունէութեան շրջանը. հայ ցիր ու ցան եղած ուսուցչական դասակարգը կենդանութիւն ստացաւ, համախմբուեց և կրկին դիմեց իւր նախկին փայփայած և սիրած գործին: Ով ծանօթ է մեր նախկին դպրոցական կեանքի ելէջին, նա կյիշէ՝ թէ սրպիսի եռանդով և իդէալական ինքնա-